

# ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԳԱՆԵՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

**ԿԻՐԱԿԻ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ 2017**

*ԺԱ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ /ԹԻԻ 34  
ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՅԻՄՆԱԿԱՅ ՊԱՀՈՑ*

**SUNDAY, November 26, 2017**

**11<sup>th</sup> SUNDAY AFTER THE FEAST OF THE  
HOLY CROSS/ N0 / 34  
EVE OF THE FAST OF ADVENT**

**TODAY'S BIBLE READINGS**

**Philippians 4:8-24 / Luke 11:1-13 /**

**Պատարագիչ՝**

**ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ**

*Հոգևոր Հովիվ*

**Celebrant:**

**REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN**

**Pastor**

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**

**Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian**

**Choirmaster: Miss Lori Antounian**

**Organist: Mr. Karen Manucharyan**

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)



# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ 4.8-24

**8**Կերջապէս, եղբայրներ, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ՝ պատկառելի, ինչ որ՝ արդար, ինչ որ՝ անկեղծ, ինչ որ՝ սիրալիր, ինչ որ՝ բարի համբաւով, ինչ որ առաքիկութեամբ եւ ինչ որ գովելի է, ատո՛նց մասին մտածեցէք: **9**Ինչ որ սորվեցաք, ընդունեցիք, լսեցիք ու տեսաք իմ վրաս՝ զանո՛նք ըրէք, եւ խաղաղութեան Աստուածը պիտի ըլլայ ձեզի հետ:

**10**Մեծապէս ուրախացայ Տէրոջմով, որ հիմա վերջապէս նորոգուեցաւ իմ վրաս ձեր ունեցած մտածմունքը, ինչպէս կը մտածէիք ալ, սակայն պատեհութիւն չունէիք:

**11**Կարօտութեան համար չէ որ կ'ըսեմ. որովհետեւ ես սորվեցայ ինքնաբաւ ըլլալ իմ եղած վիճակիս մէջ: **12**Թէ՛ գիտեմ նուաստանալ, թէ՛ ալ գիտեմ առատութեան մէջ ըլլալ: Ամէն բանի մէջ՝ ամէն կերպով վարժուած եմ թէ՛ կշտանալ, թէ՛ ալ անօթենալ, թէ՛ առատութեան եւ թէ՛ կարօտութեան մէջ ըլլալ: **13**Ամէն բանի կարող եմ անով՝ որ զօրացուց գիս: **14**Սակայն լաւ ըրիք՝ որ հաղորդակից եղաք տառապանքիս:

**15**Դո՛ւք ալ գիտէք, Փիլիպպեցիներ, թէ աւետարանին քարոզութեան սկիզբը, երբ մեկնեցայ Մակեդոնիայէն, ո՛չ մէկ եկեղեցի հաղորդակից եղաւ ինծի՝ տալու եւ ընդունելու համար, հապա միայն դո՛ւք. **16**որովհետեւ նոյնիսկ մինչեւ Թեսաղոնիկէ դրկեցիք ինծի պէտք եղածը՝ մէկ-երկու անգամ: **17**Ես կը փնտռեմ ո՛չ թէ նուէր, հապա կը փնտռեմ պտուղ, որ աւելնայ ձեր հաշիւին վրայ: **18**Իսկ ես ամէն բան ունիմ, եւ առատօրէն. լիացած եմ՝ ստանալով Եպափրոզիտոսի միջոցով ձեր դրկածները, որ անուշաբոյր հոտ մըն է, ընդունելի զոհ մը, հաճելի՝ Աստուծոյ: **19**Եւ իմ Աստուածս պիտի լեցնէ ձեր բոլոր կարիքները՝ իր ճոխութեան համեմատ, փառքով՝ Քրիստոս Յիսուսի միջոցով: **20**Ուրեմն փա՛նք Աստուծոյ ու մեր Հօր՝ դարէ դար՝: Ամէն:

**21**Բարեւեցէ՛ք բոլոր սուրբերը Յիսուս Քրիստոսով: Կը բարեւեն ձեզ ինծի հետ եղող եղբայրները: **22**Կը բարեւեն ձեզ բոլոր սուրբերը, մա՛նաւանդ անոնք՝ որ Կայսրին տունէն են:

**23**Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ: Ամէն

## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 11.1-13

**1**Երբ տեղ մը կ'աղօթեր, դադրելէն ետք իր աշակերտներէն մէկը ըսաւ իրեն. «Տէ՛ր, աղօթել սորվեցուր մեզի, ինչպէս Յովհաննէս սորվեցուց իր աշակերտներուն»:

**2**Ուստի ըսաւ անոնց. «Երբ կ'աղօթէք՝ ըսէ՛ք. “Հայր մեր՝ որ երկինքն ես”, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ”:

**3**Մեր ամենօրեայ հացը՝ տո՛ւր մեզի օրէ օր.

**4**ներէ՛ մեզի մեր մեղքերը, քանի որ մենք ալ կը ներենք բոլոր անոնց՝ որ պարտապան են մեզի. ու մի՛ տանիր մեզ փորձութեան, հապա ազատէ՛ մեզ Չարէն՝ ”»:

**5**Նաեւ ըսաւ անոնց. «Եթէ ձեզմէ մէկը՝ բարեկամ մը ունենայ, ու կէս գիշերին երթայ անոր եւ ըսէ. “Բարեկամ, ինծի երե՛ք նկանակ փոխ տուր. **6**որովհետեւ մէկ բարեկամս ճամբորդած ատեն ինծի եկաւ, եւ ոչինչ ունիմ՝ անոր հրամցնելու”, **7**ու եթէ ան ներսէն պատասխանէ. “Չիս մի՛ անհանգստացներ. արդէն դուռը գոցուած է, ու զաւակներս իմ քովս՝ անկողինին մէջ են. չեմ կրնար կանգնիլ եւ քեզի հաց տալ”, **8**կը յայտարարեմ ձեզի. “Թէեւ բարեկամութեան համար ոտքի չելլէ՛ անոր տալու, անոր պատճառած տաղտուկին՝ համար պիտի կանգնի ու պէտք եղածը տայ անոր”:

**9**Ես ալ կը յայտարարեմ ձեզի. “Խնդրեցէ՛ք՝ եւ պիտի տրուի ձեզի. փնտռեցէ՛ք՝ ու պիտի գտնէք. դուռը բախեցէ՛ք՝ եւ պիտի բացուի ձեզի: **10**Որովհետեւ ո՛վ որ խնդրէ՛ կը ստանայ, ո՛վ որ փնտռէ՛ կը գտնէ, եւ ո՛վ որ դուռը բախէ՛ պիտի բացուի անոր:

**11**Եթէ որդի մը հաց ուզէ ձեզմէ ռեւէ մէկէն՝ որ հայր է, միթէ քա՛ր պիտի տայ անոր. կամ եթէ ձուկ ուզէ, միթէ ձուկին տեղ օ՛ճ պիտի տայ անոր. **12**կամ եթէ հաւկիթ ուզէ, միթէ կարի՞ն պիտի տայ անոր: **13**Ուրեմն եթէ դո՛ւք որ չար էք՝ գիտէք ձեր զաւակներուն բարի նուէրներ տալ, ո՛րչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգի՛ն պիտի տայ անոնց՝ որ կը խնդրեն իրմէ”»:

## Philippians 4.8-24

**8** Finally, brethren, whatsoever things are true, whatsoever things are honest, whatsoever things are just, whatsoever things are pure, whatsoever things are lovely, whatsoever things are of good report; if there be any virtue, and if there be any praise, think on these things.

**9** Those things, which ye have both learned, and received, and heard, and seen in me, do: and the God of peace shall be with you. **10** But I rejoiced in the Lord greatly, that now at the last your care of me hath flourished again; wherein ye were also careful, but ye lacked opportunity. **11** Not that I speak in respect of want: for I have learned, in whatsoever state I am, therewith to be content. **12** I know both how to be abased, and I know how to abound: every where and in all things I am instructed both to be full and to be hungry, both to abound and to suffer need. **13** I can do all things through Christ which strengtheneth me.

**14** Notwithstanding ye have well done, that ye did communicate with my affliction.

**15** Now ye Philippians know also, that in the beginning of the gospel, when I departed from Macedonia, no church communicated with me as concerning giving and receiving, but ye only.

<sup>16</sup> For even in Thessalonica ye sent once and again unto my necessity. <sup>17</sup> Not because I desire a gift: but I desire fruit that may abound to your account. <sup>18</sup> But I have all, and abound: I am full, having received of Epaphroditus the things which were sent from you, an odour of a sweet smell, a sacrifice acceptable, wellpleasing to God. <sup>19</sup> But my God shall supply all your need according to his riches in glory by Christ Jesus. <sup>20</sup> Now unto God and our Father be glory for ever and ever. Amen. <sup>21</sup> Salute every saint in Christ Jesus. The brethren which are with me greet you. <sup>22</sup> All the saints salute you, chiefly they that are of Caesar's household. <sup>23</sup> The grace of our Lord Jesus Christ be with you all. Amen

## Luke 11.1-13

<sup>11</sup> And it came to pass, that, as he was praying in a certain place, when he ceased, one of his disciples said unto him, Lord, teach us to pray, as John also taught his disciples. <sup>2</sup> And he said unto them, When ye pray, say, Our Father which art in heaven, Hallowed be thy name. Thy kingdom come. Thy will be done, as in heaven, so in earth. <sup>3</sup> Give us day by day our daily bread. <sup>4</sup> And forgive us our sins; for we also forgive every one that is indebted to us. And lead us not into temptation; but deliver us from evil. <sup>5</sup> And he said unto them, Which of you shall have a friend, and shall go unto him at midnight, and say unto him, Friend, lend me three loaves; <sup>6</sup> For a friend of mine in his journey is come to me, and I have nothing to set before him? <sup>7</sup> And he from within shall answer and say, Trouble me not: the door is now shut, and my children are with me in bed; I cannot rise and give thee. <sup>8</sup> I say unto you, Though he will not rise and give him, because he is his friend, yet because of his importunity he will rise and give him as many as he needeth. <sup>9</sup> And I say unto you, Ask, and it shall be given you; seek, and ye shall find; knock, and it shall be opened unto you. <sup>10</sup> For every one that asketh receiveth; and he that seeketh findeth; and to him that knocketh it shall be opened. <sup>11</sup> If a son shall ask bread of any of you that is a father, will he give him a stone? or if he ask a fish, will he for a fish give him a serpent? <sup>12</sup> Or if he shall ask an egg, will he offer him a scorpion? <sup>13</sup> If ye then, being evil, know how to give good gifts unto your children: how much more shall your heavenly Father give the Holy Spirit to them that ask him?



## ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆԸ

**<<Եւ մեզի ներե մեր պարտքերը, ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն: Վասնզի եթէ ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Երկնաւոր Հայրն ալ մեզի կը ներե: Հապա եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չի ներեր ձեր յանցանքները>>: (Ղու. 11.1-13)**



### **ՏԵՐՈՆԱԿԱՆ ԱՊՕԹՔԷՆ**

**առնուած վերոյիշեալ հատուածը առանցքը կը կազմէ քրիստոնէութեան վարդապետած մարդկային եւ աստուածային ներողամտութեան:**

**ՏԵՐՈՆԱԿԱՆ ԱՊՕԹՔՐԸ, զոր աշակերտներու խնդրանքին վրայ Քրիստոս սորվեցուց մեզի, կը պարփակէ Էական սկզբունքներ՝ որոնց կիրարկումը մեր կեանքին մէջ անհրաժեշտ է եւ օգտակար:**

**Մեզմէ իւրաքանչիւրը իր մանկութենէն գոց սորված է զայն եւ կ'արտասանէ <<Հայր Մեր>>ը առանց անդրադառնալու անոր բովանդակութեան, իմաստին եւ զօրութեան: Պարզ, բայց խորիմաստ խօսքեր են անոնք զորս պարտինք սերտել, հասկնալ ու գործադրել մեր ամենօրեայ կեանքի ընթացքին:**

Աղօթել է եւ խնդրել առաջ այս շնորհը, մենք պարտաւոր ենք գիտակցութիւնը ունենալ եւ ընդունիլ յանցանքին կամ մեղքին գոյութիւնը: Քիչ չէ թիւը այն հաւատացեալներուն, որոնք կը խորչին լսել իսկ *յանցաւոր* բառը: Անոնց հասկացողութեամբ յանցաւորներ են աւագակները, ոճրագործները, գինեմոլները եւլն., եւ իրենք զիրենք դուրս դրած են յանցաւորի վիճակէն: Սակայն, մեղքը տիեզերական հիւանդութիւն մըն է որմէ ամէն ոք վարակուած է: Մեղքը պարտք մըն է զոր թերացած ենք վճարել. այլ խօսքով, Աստուծոյ եւ մեր նմաններուն հանդէպ չգործադրուած պարտականութիւն մըն է:

<<Եւ մեզի ներքէ մեր պարտքերը ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտապաններուն>>:

Ահաւասիկ խնդրանք մը, որ ամենէն կարելորն է Տերունական Աղօթքին մէջ: Աստուծմէ կը հայցենք մեր մեղքերուն ներուհիլը այն համեմատութեամբ, որ մենք ներած ենք մեզի նման մահկանացուներուն:

Յիսուս յստակօրէն կը մատնանշէ այն իրողութիւնը թէ՛ երբ մենք ներենք ուրիշներուն յանցանքները, Աստուած ալ մեզի պիտի ներէ: Աստուածային եւ մարդկային ներողամտութիւնը սերտօրէն կապուած են իրարու հետ: Հետեւաբար, երբ մենք չենք յօժարիր մարդոց ներել, աւելի լաւ կ'ընենք չարտասանել <<Հայր Մեր>>ը, որովհետեւ ապարդիւն պիտի ըլլայ ան:

Տա Վինչի արուեստագետը իր մէկ թշնամիին դէմքը գծագրած է Յուդայի մարմնին վրայ. Ան այլեւս չէ կրցած նայիլ Քրիստոսի դէմքին: Բայց երբ պաստառին վրայէն աւրած է իր թշնամիին պատկերը նոյն գիշերն իսկ Քրիստոս երեւցած է անոր երագին մէջ:

Եթէ անհատ մը հաշտ չէ այլ անհատի մը հետ, ինչպէ՞ս կրնայ Աստուծմէ խնդրել իր յանցանքներուն թողութիւնը: Ներուելու համար պէտք է ներել գիտնանք:

Առհասարակ, մարդ էակին համար դժուար է ներել իր նմաններուն: Մենք եսասեր ենք եւ անձնակեդրոն: Մեր նկարագրի այս յորի երեսը կը թուլացնէ մեր անհատականութեան ամբողջականութիւնը: Բարկութիւնը կը փոխադարձենք բարկութեամբ, ատելութիւնը՝ ատելութեամբ, որուն իբր հետեւանք կը կործանենք թե՛ մեր եւ թե՛ մեր հակարակորդին անհատականութիւնը:

Քրիստոս ներողամտութեան ոգին քաջալերեց մարդոց մէջ, որովհետեւ ներողամտութեան համար աղօթել՝ աստուածային սեր ինդրել է: Սերը միայն կրնայ յաղթանակել բարկութեան զգացումին: Անհատի մը բարկութիւնը երբ սիրով դիմագրաւենք, զօրացուցած կ'ըլլանք մեր եւ մեր դիմացինին անձնականութիւնը, միեւնոյն ատեն վերանորոգելով նաեւ՝ մեր հոգեկան ուժերը:

Ստեփանոս Նախավկան սիրով դիմագրաւեց զինք քարկոծող բարկացոտ ամբոխը: Անոր արտասանած աղօթքի մրմունջները եւ ցուցաբերած ներողամտութեան ոգին նոր մարդ դարձուցին Սօդոսը:

Ներողամտութիւնը կ'առաջնորդէ մեզի անձնուրածութեան, մեծութեան: Վերջին Ընթրիքին, երբ առաքեալները իրարու հետ կը վիճէին թէ իրենցմէ ո՞վ մեծ պիտի ըլլար Քրիստոսի թագաւորութեան մէջ, Յիսուս չբարկացաւ, այլ ներեց անոնց: Ան նոյնիսկ լուաց աշակերտներուն ոտքերը, որպէս անձնուրաց սիրոյ նշան: Իր այդ արարքով մոռցուեցաւ մեծութեան շուրջ եղած վեճը, փշրուեցաւ աշակերտներուն ետը եւ անոնք գօտեպնդուեցան Ս. Զոգիին զօրութեամբ:

Ուրեմն, Քրիստոսէ օրինակ առնենք եւ սորվինք ներել մարդոց յանցանքներուն: Բարկութեան եւ ատելութեան յուզումները փոխարինենք սիրոյ զգացումով:

Մեր դժուարութիւնները լուծենք քրիստոնէական սիրով: Այն ժամանակ Աստուած ալ պիտի ներէ մեր յանցանքներուն, երբ սրտաբաց արտասանենք Տերունական Աղօթքը:

**Պօղոս Առաքեալ Եփեսացիներուն գրած Թուղթին մէջ այս ուղղութեամբ կը պատգամէ. «Եւ իրարու հետ քաղցր եղէք, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի» (Դ, 32):**

**Տ. Եղիա Ա. Քիւյ. Քերվանճեան**



**Նոյեմբեր 25, 2017**

**Ս. Գրիգոր Եւ Նիկողայոս  
Սքանչելագործ  
Յայրապետներու Եւ Միւռոն  
Եպիսկոպոսի  
յիշատակութեան օր**



Ս. Գրիգոր Սքանչելագործը ծնած Է Պոնտոսի (Սեբաստիա) Նեոկեսարիա քաղաքին մէջ ազնուական ընտանիքէ, շուրջ **210** թուականին:

Գրիգորը մտադիր էր հմտանալ օրէնսգիտութեան եւ հռետորութեան

մէջ, սակայն Աստուած անոր եւ իր եղբօր համար այլ ճանապարհ նախասահմանած էր: Անոնք կ'ուսանին Աթենքի մէջ, ապա Պաղեստինեան Կեսարիայի մէջ՝ աշակերտելով այն ժամանակուայ ամենահեղինակաւոր քրիստոնէայ մտաւորականին՝ Որոգինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ ան կը ձեռնադրուի քաղաքի եպիսկոպոս: Աւանդութեան համաձայն՝ Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրուելու օրերուն Նեոկեսարիայի մէջ հազիւ **17** քրիստոնէայ կար, իսկ մահուան օրերուն՝ ընդամենը **17** հեթանոս: Իր անուան հետ կապուած բազմաթիւ հրաշքներու համար արժանացած Է «Սքանչելագործ» մակդիրին: Ս. Գրիգորը աչալոջութեամբ կառավարեց թէ՛ իրեն վստահուած թեմը եւ ժողովուրդը, թէ՛ եղաւ մեծ մատենագիր՝ թողելով բազմաթիւ աստուածաբանական երկեր: Ան վախճանած Է **270** թուականին խաղաղ մահուամբ:

Ս. Նիկողայոս Յայրապետը ծնած Է Փոքր Ասիայի Լիկիա գաւառի Բաթարա քաղաքին մէջ (ներկայիս Անթալիայի մօտակայքը): Փոքր հասակին կը կորսնցնէ մեծահարուստ



Եւ բարեպաշտ ծնողները եւ կը մեծնայ իր մօրեղբօր՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի ինսամբին ներքոյ: Աւետարանական պատգամը՝ «Վաճառիր ունեցուածքդ եւ բաժնէ աղքատներուն»>>(հմմտ. Մտթ. ԺԹ 21), իր կեանքի նշանաբանը կը դարձնէ՝ ինսամելով աղքատներուն, հիւանդներուն, բանտարկեալներուն եւ որբերուն: Ժողովուրդին կամքով կը դառնայ Չմիւռնեայի եպիսկոպոսը: Հալածանքներու ընթացքին կ' արքայութիւն, սակայն չի դադարիր ամենուր Աւետարանը քարոզելէ: Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը, մասնակցած է **325** թուականին Նիկիոյ Տիեզերաժողովին: Մահացած է **326** թուականին: Ընդհանրական Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի Սանտա Կլաուս անուամբ:


Ս. Միռն եպիսկոպոսը ծնած է մօտ **350** թուականին: Ան մեծ հրաշագործ էր՝ յայտնի իր ողորմութեամբ եւ բարեգործութեամբ: Զրիստոնեաներու հալածանքներու ժամանակ, երբ Ս. Միռնը Կրետէի եպիսկոպոսն էր, կը քաջալերէ եւ կը խրախուսէ բոլորին՝ ինքը եւս անհամբեր սպասելով նահատակութեան պսակը ստանալուն: Սակայն Աստուծոյ կամքով **կը** հասնի մինչեւ խոր ծերութիւն՝ **100** տարեկանին  
բարեպաշտ  
աւարտելով իր կեանքը:



# Holidays

2017-11-25

Commemoration of Sts.  
Gregory the Thaumaturge,  
Pontiff Nikoghayos and  
Bishop Muron



**St. Gregory the Thaumaturge**

(Wonderworker) was born in the town Neocaesaria of Pontus (Sebastia), in the family of a nobleman, in about 210 AD. Gregory was going to study jurisprudence and rhetoric, but another way was predetermined by God for him and his brother. Gregory and his brother

receive education in Athens and then in Palestinian Caesaria. Their teacher was Vorogines who was one of the most prominent Christian scientists of that time. Returning to Neocaesaria, he is ordained as the Bishop of the town. According to the tradition during the period of Gregory's ordination there were hardly 17 Christians in Neocaesaria, and when he passed away there were only 17 heathens. He has deserved the epithet "Thaumaturge" for the numerous miracles relating to his name and reputation. St. Gregory is also the author of many theological works. He passed away in 270 AD.

Pontiff Nikoghayos (Nicholas the Bishop) was born in the town Batara (presently nearby Antalia), in the province of Likia, in Asia Minor. His rich and pious parents pass away when he was a baby, and he is brought up and educated by his Uncle Bishop Nikoghayos Yerets. The evangelical commandment: "... sell all you have and give the money to the poor..." (The Gospel according to Mathew 19:21) becomes the essence of the life of Nikoghayos. He takes care of the poor, the sick, the prisoners and the orphans. By the will of the people he becomes the Bishop of Smyrna. During the period of Christians' persecutions he is exiled, but however, continues to preach the Gospel everywhere. After the establishment of peace, he returns to his residence and participates in the Ecumenical Council of Nicaea in 325 Ad. He has passed away in 326 AD. He is one of the most beloved saints of the Universal Church and is more famous by the name Santa Claus.

Bishop Muron (Myron) was born in about 350 AD. He was a great wonder-worker and was familiar for his mercy and charity. During the period of Christians' persecutions, When St, Muron was the Bishop of Crete, he impatiently waiting for his martyrdom, supports and encourages everybody, By the will of God he lives up to old age and passes away at the age of 100.





# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցույ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ

## ՍԻՐԱԼԻՐ ՀՐԱԿԵՐ

Սիրելի հաւատացեալներ,

Այս գրութեամբ հաճոյքն ունինք հրաւիրելու Ձեզի Եկեղեցույ Գնման եւ Օծման 47-րդ տարեդարձին նուիրուած հանդիսաւոր Ս. Պատարագին եւ ճաշկերոյթին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017-ին: Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին: Օրուան պատարագիչն է Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան: Ս. Պատարագի աւարտին կը կատարուի Հոգեհանգստեան պաշտօն Եկեղեցույ հանգուցեալ անդամներու, բարերարներու, ինչպէս նաեւ՝ Եկեղեցույ մէջ իրենց ծառայութիւնը մատուցած հաւատացեալներու հոգիներուն ի հանգիստ:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, «Մարի Մանուկեան» սրահին մէջ տեղի կ'ունենայ հանդիսաւոր ճաշկերոյթ եւ գեղարուեստական յայտագիր:  
Սիրելիներ,

Կը խնդրենք Ձեր ներկայութիւնը հաստատել հեռաձայնելով Եկեղեցույ գրասենեակ՝ (514) 279-3066:

Հոգեւոր Հովիւ  
Եւ Ծխական Խորհուրդ





# Ա. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

## ԳՆՄԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ



## Յայտարարութիւն

Ձեր ուշադրութեան կը փափաքինք յանձնել թէ՛ այս տարի եւս հանդիսաւոր կերպով պիտի նշուի Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ տարեդարձը, որուն խորհրդաւոր պատմագրական անցեալը արժանաւորապէս նշելու եւ Եկեղեցւոյ պատմագրութեան շարժառիթը առաւել եւս շինիչ դարձնելու նպատակով հարկ նկատեցինք ունենալ հովանաւորող նուիրեալ կնքահայրեր, որոնք հանգամանօրէն հանդիսութեան ընթացքին պիտի կատարեն կարկանդակի պաշտօնական հատումը:

Առ այդ կոչ կ'ուղղենք մեր սիրելի հաւատացեալներուն եւ յանուն Եկեղեցւոյ ընդմիջտ նուիրեալ անձնաւորութիւններուն, եթէ կը փափաքին այս յիշատակելի օրուան մաս կազմել ստանձնելով այս կարեւոր պաշտօնը, կը խնդրենք կապ հաստատել Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեանին (514) 241-9347 կամ Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ

(514) 279-3066:

Շնորհակալութիւն Ձեր համագործակցութեան համար:

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



Սիրելի հաւատացեալներ,

Անոնք որոնք կը փափաքին, որ  
Հոգեւոր հովիւը այցելութիւն  
կատարէ իրենց հիւանդ  
ընտանեկան պարագաներուն կամ  
հարազատներուն, Եկեղեցոյ Հովիւր՝

Արժ. Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան պատրաստէ  
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու  
ձեր փափաքին:

Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ  
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ  
Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066



Dear  
Parishioners,  
If you have  
family  
members or  
relatives that you wish to have spiritual  
support, our Pastor Arch. Fr. Yeghia  
Kervanjian is ready to fulfill your wish and visit  
them, when and where is needed.

Please feel free to contact Der Yeghia directly  
at (514) 241-9347  
or call the secretariat of the Church at (514)  
279-3066

## FAMILY PRAYER

*God made us a family  
We need one another  
We love one another  
We forgive one another  
We work together  
We play together  
We worship together  
Together we use God's word  
Together we grow in Christ  
Together we love all men  
Together we serve our God  
Together we hope for Heaven  
These are our hopes and ideals  
Help us to attain them,  
O God, Through Jesus Christ  
our Lord*



## ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱԲԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ



Տնօրհներք փափաքող  
հաւատացեալները  
կրնան հեռաձայնել Տ. Եղիա Ա. Քհնյ.  
Քերվանճեանին՝

(514) 241-9347 կամ

Եկեղեցւոյ գրասենեակ՝

(514) 279-3066

### The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia

at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



# Աստուածաշունչի Սերտողութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկէ՛ք միացէք մեզի  
ամեն Զինգշաբթի երեկոյեան ժամը  
7:00-ին, մասնակից ըլլալու մեր  
հետաքրքրական Աստուածաշունչի  
Նիւթերուն եւ ընկերային  
միջավայրին:



Աստուածաշունչի սերտողութեան  
խումբը՝ ընկերային ջերմ  
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ  
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Զհնյ.  
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն  
պատրաստած  
Աստուածաշնչական նիւթերու  
հետաքրքրական ճիւղ  
գիտելիքներով:





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,  
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,  
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ  
քարտուղարութեան (514) 279-3066, մեր  
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար  
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:  
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

***Հովիւ եւ Ծխական Խորհուրդ***



**Attention to our beloved parishioners,  
If you have changes in your address, e-mail or phone numbers  
please feel free to convey your new data to the Church office at  
(514) 279-3066, to maintain our communication in a regular,  
continuous, and up-to-date course.**

**Thank you for your cooperation.**

***Pastor and Parish Council***



# ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՒՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
Donations of November 2017  
have been received with great appreciation***



## **ELEVATOR FUND:**

**The Charles & Agnes Kazarian Family \$1000.**

## **GENERAL CHURCH:**

**Manoir Gouin Seniors \$91, Dr. & Mrs. Bagdasar Agopyan \$90.**

## **CHURCH 47<sup>th</sup> ANNIVERSARY**

**Mr. & Mrs. Manouk & Siran Jamgotchian, Mr. & Mrs. Harry & Magda  
Yaghjian \$250.**

**Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$100**

## **IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

### **THE LATE KRISTINA KAYZAK**

**Mrs. Lucie Tatar \$150, Mrs. Caroline Nalbantoglu, Mr. & Mrs. Roupén  
Glamyán, Mrs. Zariyu Sahbaz, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mr. &  
Mrs. Arman & Seka Gurarslan, Mrs. Josephine Nalbantoglu, Mrs. Janet  
Nalbantoglu, Mrs. Alis Afker, Mrs. Zaruhi Hacetoglu, Mr. & Mrs. Avedis  
& Ani Kayzak, Mrs. Nazli Kayzak \$100, Mr. & Mrs. Berdj & Emma Essen**

**\$60, Mrs. Sevan Ohanian, Mr. & Mrs. Raffi & Jebid Froundjian, Mrs. Arpi Cihanoglu, Mr. Karabet Ceylan, Mr. & Mrs. Robert & Mary Sanlian, Mr. Kamer Yardimoglu, Mrs. Mannik & Vazken Ortainceyan, Ms Sirarpi Hacetoglu, Ms Jaklin Arslanguloglu \$50, Mrs. Diana Menendyan, Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen, Mrs. Sylvie Emiryan, Mr. & Mrs. Murat & Nadya Armutlu, Mr. & Mrs. Zaven & Niver Gudsuz \$40, Mrs. Zabel Artar, Mr. Nazaret Sahakian \$30, Mr. Serge Pressoir \$20.**

**HOKEHANKISD:**

**THE LATE KASSABIAN FAMILY**

**Mr. & Mrs. Alex & Nora Kunterian \$60.**

**THE LATE ALTAN FAMILY**

**Mr. & Mrs. Raci Altan \$100.**

**THE LATE HASMIG & GEORGE**

**TER -STEPANIAN**

**Mrs. Karine Ter-Stepanian \$50.**

**THE LATE ARSHALUYS MENENDIAN**

**Mr. & Mrs. Ara Menendian \$50.**


**YOUGHAKIN TZNOUNT:**

**Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$100.**



# ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL

## ԿԻՐԱԿԻ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ 2017



Տ. ԵՆ ՏԻԿ. ԳՐԻԳՈՐ ԵՆ ՌՕՂԱ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ,  
ՏԻԿ. ՌԵԱԿԵՐԱ ԹԱՂԱՅԻ,  
Տ. ԵՆ ՏԻԿ. ՕՆՆԻԿ ԵՆ ՄԱՐԻ ՓԻԼԱՖԵԱՆԻ,  
ԽՆԴՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԽԱՆՁԱՍՏԵԱՆ ԱԿԱԶՍՈՆ ԿՐ ԽՆԴՐԵՆ  
ԻՐԵՆՑ ՍԻՐԵԳԵԱԼ ԾՆՈՂԱԳ ԵՆ ՄԵԾ ԾՆՈՂԱԳ`

**ԶԱՐԵՅ, ՌԵԴԵԿԱ, ՄԱՐԳՐԻՏ,  
ՎԱՐԴԱՆՈՅՇ, ԿԱՐՊԻՍ ԵՒ ՈՍԿԻ  
ՏԻԳՐԱՆԵԱՆՆԵՐՈՒ  
(ZAREH, REBECCA, MARGUERITRE,  
VARTANOUSH, GARBIS, & VOSGI DIKRANIAN)**

Յոգիներուն ի հանգիստ  
Ինչպէս նաեւ`

**ՏԻԳՐԱՆԵԱՆ  
(DIKRANIAN)**

Գերդաստանի համայն ննջեցելոց Խոգիներուն ի հանգիստ

**ԱՐՍԵՆ, ՀՌԻՓՍԻՄԵ, ԳԱԼՈՒՍՏ,  
ԹՐՖԱՆՏԱ ԵՒ ՄԱՐՏԻՐՈՍ  
ՓԻԼԱՖԵԱՆՆԵՐՈՒ**

**(ARSEN, HRIPSIME, KALOUST,  
TERFANDA, & MARDIROSS PILAFIAN)**

Յոգիներուն ի հանգիստ  
Ինչպէս նաեւ`

**ՓԻԼԱՖԵԱՆ  
(PILAFIAN)**

Գերդաստանի համայն ննջեցելոց

Հոգիներուն ի հանգիստ  
(սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տ. եւ Տիկ. Սեւան եւ Այտա Քիլիւքեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Գօլլօքեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Յովհաննէս եւ Սօնիա Գալայճեանի եւ զաւակներուն,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

**ԱՎԵՏԻՔ ՔԻԼԻՔԵԱՆԻ**  
(AVEDIK KULLUKIAN)

Մահուան 3-րդ տարելիցին առիթով



Տ. եւ Տիկ. Արթօ եւ Անի Պասմաճեանի  
եւ զաւակներուն՝ Մաթիուկի եւ Քրիսթոֆըրի,  
Մարի-Քրիսթին Գարաճեանի եւ Սաֆօ Խաչերեանի,  
Տ. եւ Տիկ. Հայկ եւ Ֆիլիս Ճօպուլեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Տիգօ եւ Նէսսի Ճօպուլեանի,  
Տիար Կրէկ Ճօպուլեանի եւ զաւակներուն,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ եւ հօրաքրոջ՝

**ՍԻՐԱՆՈՅՇ ՃՕՊՈՒԼԵԱՆԻ**  
(SIRANOUCHE DJOBOULIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով



Տիկ. Սիլվա Քարաօղլանեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի՝

**ՅԱԿՈՒ ՊԵՔԵՐԵԱՆԻ**  
(HAGOP BEKARIAN)

Հոգևոյն ի հանգիստ  
**ՆԱՅԻՐԻ ՄԱՐԻԱ ՊԵՔԵՐԵԱՆԻ**  
**(NAYIRI MARIA BEKARIAN)**  
Մահուան 2-րդ տարելիցին առիթով





# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Ձեռնարկ
Յունուար	1, Երկուշաբթի	Տարեմուտ Կաղանդ
	5, Բրիսաթ	Ճրագալոյց Ս. Ծննդեան
	6, Շաբաթ	Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն (Ճաշկերոյթ) «Մարի Մանուկեան» սրահ
	28, Կիրակի	Ս. Սարգիս «Նոր Նշանեալ եւ Նորապսակ Զոյգերու Օրհնութեան Օր»
Փետրուար	8, Հինգշաբթի	«Վարդանանց» Սկառուտներու Օրհնութիւն
	10, Շաբաթ	Բուն Բարեկենդան Ճաշկերոյթ

	<b>14, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</b>	<b>Հսկում Տեսողնդառաջ</b>
	<b>21, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</b>	Հսկում
	<b>28, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</b>	Հսկում
<b>Մարտ</b>	<b>4, Կիրակի</b>	<b>Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողով</b>
	<b>7, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</b>	Հսկում <b>Միջինք</b>
	<b>10, Շաբաթ Առաւօտեան ժամը 11:00- ին</b>	Արեւազալի Ժամերգութիւն եւ Միջինքի հիւրասիրութիւն
	<b>14, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</b>	Հսկում
	<b>17, Շաբաթ</b>	<b>Ս. Գրիգոր Լուսւորիչի Վիրապ Մտնելու Յիշատակութեան Օր</b>

	<b>21, Չորեքշաբթի Երեկոյեան ժամը 7 :00- ին</b>	<b>Հսկում</b>
	<b>25, Կիրակի</b>	<b>Ծաղկազարդ</b>
	<b>29, Հինգշաբթի</b>	<b>Հինգշաբթի Ոտնլուայ Երեկոյեան ժամը 7:00-ին Պահոց Ընթրիք «Մարի Մանուկեան» սրահ Խաւարման Գիշեր</b>
	<b>30, Աւագ Ուրբաթ</b>	<b>Կարգ Թաղման Երեկոյեան ժամը 7- ին</b>
	<b>31, Շաբաթ</b>	<b>«Ճրագալոյց» Ս. Չատկուայ</b>
<b>Ապրիլ</b>	<b>1, Կիրակի</b>	<b>Ս. Չատիկ (Ճաշկերոյթ) «Մարի Մանուկեան» սրահ</b>
	<b>2, Երկուշաբթի</b>	<b>Մեռելոց Հոգեհանգիստ</b>
	<b>24, Երեքշաբթի</b>	<b>Մեծ Եղեռնի Յիշատակի Օր</b>



<b>Մայիս</b>	<b>10, Հինգշաբթի</b>	<b>Համբարձման Տօն «Մարի Մանուկեան» Ճաշկերոյթ եւ վիճակ</b>
	<b>13, Կիրակի</b>	<b>Մայրերու Օր</b>
	<b>25, 26, 27 Ուրբ., Շբթ., Կիր.</b>	<b>35-րդ Պատգամաւորական Ժողով Ս. Վարդան Եկեղեցւոյ մէջ Վանքովքը</b>
<b>Յունիս</b>	<b>3, Կիրակի</b>	<b>Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսաւորչի Ելն ի Վիրապէս Եկեղեցւոյ Անուանակոչութիւն Մատաղօրհնէք</b>
<b>Յուլիս</b>	<b>8, Կիրակի</b>	<b>«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Զրօրհնէք Վարդավառ</b>
	<b>9, Երկուշաբթի</b>	<b>Մեռելոց Հոգեհանգիստ</b>
<b>Օգոստոս</b>	<b>12, Կիրակի</b>	<b>Տօն «Վերափոխում» Ս. Աստուածածնի Խ աղոթօրհնէք – (ճաշկերոյթ) Ս. Մանուկեան</b>
<b>Սեպտեմբեր</b>	<b>9, Կիրակի</b>	<b>Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ</b>

	<b>21, Ուրբաթ</b>	<b>Հայաստանի Հանրապետության 25-րդ Տարեդարձ</b>
<b>Հոկտեմբեր</b>	<b>27, 28 Շաբաթ, Կիրակի</b>	<b>Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ</b>
<b>Նոյեմբեր</b>	<b>Թուականը յաջորդիլ</b>	<b>«Ամիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ</b>
<b>Դեկտեմբեր</b>	<b>2, Կիրակի</b>	<b>Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Խրախճանք CFFA «Մարի Մանուկեան» սրահ</b>
	<b>31, Երկուշաբթի</b>	<b>ՆՈՐ ՏԱՐԻ</b>





## Եկեղեցւոյ Ձեռնարկներ

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ  
Աստուածաշունչի Սերտողութիւն – Հինգշաբթի օրերուն Տ. Եղիա Ա.  
Քինյ. Քերվանճեանի ուղղեկցութեամբ  
Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017  
Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –  
Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017  
Կիրակնօրեայ Վարժարան – Կիրակի առաւօտեան ժամը 11-էն  
սկսեալ Ուսուցչուհի Շողիկ Գուշաքճեանի հետ  
Բուն Բարեկենդան – Շաբաթ, 10 Փետրուար 2018**

## CHURCH UPCOMING EVENTS

**Bible Study – Every Thursday at 7:00 pm led by Arch. Fr. Yeghia  
Kervanjyan  
Children’s Christmas /CFFA – Sunday- December 3<sup>rd</sup>, 2017  
Church 47<sup>th</sup> Anniversary – Sunday- December 10<sup>th</sup>, 2017  
Sunday School – Every Sunday at 11:00 am with Miss Shoghig  
Koushakjian  
Poun Paregentan Bal Masque – Saturday – February 10, 2018**



**ԲՈՒՆ**



**ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ  
ԽՐԱԽՃԱՆՔ**



**Շաբաթ, 10 Փետրուար 2018  
Մանրամասնութիւնները յաջորդիւ**

**POUN  
PAREGENTAN  
PARTY**



**BAL MASQUE**

**Saturday, February 10, 2018**

**The details will be followed**



*During the Holiday Season more than ever, our thoughts turn gratefully to those who have made our progress possible. And in this spirit we sincerely say Thank You and Best Wishes for the holiday season and a Happy New Year!*



# Հիմնադրամ Հայաստանի երեխաներու



Children's Fund For  
Armenia



Le Fonds des enfants  
de l'Arménie



## ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՍՈՒՐԲ ԾՆՆՌԵԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆԻՍՈՒԹԻՒՆ



Կազմակերպութեամբ «Հայաստանի երեխաներու Հիմնադրամի» (CFFA)  
Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ

## BENEDICTION DE NOËL ET CELEBRATION DU NOUVEL AN

Organisé par le Fonds des enfants pour l'Arménie (CFFA)  
à la cathédrale arménienne Saint-Grégoire l'Illuminateur de Montréal

## CHILDREN'S CHRISTMAS BLESSING AND NEW YEAR CELEBRATION

Organized by the Children's Fund for Armenia (CFFA)  
at Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

### ԿԻՐԱԿԻ

DIMANCHE 03.12.2017 SUNDAY

Կ.Ե. 12:30 P.M.

Հանդէսը կը խանդավառէ «Ուրախ Տարեդարձ» խումբը  
Հանդիպում կազանդ Պապայի հետ

Divertissement par le groupe «Birthdays with Smiles»  
Rencontre avec le Père Noël

Entertainment by «Birthdays with Smiles» Group  
Meeting with Santa Claus

Համով ուտելիք 🍷 Delicious food 🍷 Nourriture délicieuse

615 Stuart Avenue, Outremont, H2V 3H2

☎ 514-279-30-66 | 514-276-94-79

@ contact@armenianchurch.ca

🌐 childrenfundforarmenia.com



Մուտքի նուէր

Frais d'entrée 20\$ Entrance fee

# ՏԱՐԵԴԱՐՁ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցւոյ Գնման եւ Օծման

The 47th Anniversary of Anointment & Purchase of  
St-Gregory the Illuminator Armenian Cathedral

Հովանաւորութեամբ՝

ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

UNDER THE AUSPICES OF

HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMIAN

Primate of the Canadian Armenian Diocese

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

Sunday December 10, 2017

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Divine Liturgy at 10:30 am

Պատարագիչ՝

ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Celebrant

HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMIAN

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ գեղարուեստական յայտագիր «Մարի  
Մանուկեան» սրահին մէջ

After the Divine Liturgy

Lunch will be held in "Marie Manoogian" hall

Musical program will be performed

Միրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը միասնաբար տօնելու  
Եկեղեցւոյս Օծման եւ Գնման 47-րդ Տարեդարձը

Տեղերու ապահովման համար գրասենեակ՝ հաճեցէք հեռաձայնել  
Եկեղեցւոյ (514) 279-3066

We invite cordially our parishioners to celebrate together of our Church 47th  
Anniversary of Anointment & Purchase

For reservation please call to the church office at (514) 279-3066

47<sup>րդ</sup>





**BOLSAHAY FOUNDATION** Պոլսահայ հիմնադրվ  
 St. Gregory the Illuminator Armenian Cathedral Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

**ՄԻԱՍՆԱԲԱՐ TOGETHER ENSEMBLE**



**MARTEN YORGANTZ**

With his band  
 And **D.J. SAKO**

**2018**

**December 31, 8PM**

**Happy New Year**



**Bolsahay Center**  
 2855 Victor Doré, Montréal

Reservations call: **ARA (514) 337-0831**  
**MARAL (514) 279-3066**

Reservations Paid until December 10th \$80  
 after December 10th \$90

Children 8 ~ 12 yrs 50% off  
 Children up to 8 yrs old no charge







# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

**St. Gregory the Illuminator Armenian Cathedral**

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

# SUNDAY SCHOOL

**On Sunday, September 10, 2017**

**For the ages of 6-12 years old children**

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մէջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Զերվանճեանին (514) 241-9347



**In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.**

**Fun & fascinating consecutive Fieldtrips**

**For more information and registration call to the Church office (514) 279-3066**

**Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347  
E-Mail: [secretary@saintgregory.ca](mailto:secretary@saintgregory.ca), [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)  
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



# ԴՊՐԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

## Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

Կը յայտնեն թէ իսկ սկսած են դպրաց  
պատրաստութեան  
Հանդիպումները

Այն պատանիներն ու երիտասարդները,  
որոնք կը փափաքին ծառայել  
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը  
խնդրենք

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241-9347  
Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066:

Հոգեւոր Հովիւ  
Տէր Եղիա Ա Քհնյ. Քերվանճեան

# ՄԱՅՐ ՏԱԾԱՐ



# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



## ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի  
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,  
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս  
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն  
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ  
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն  
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ  
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող  
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066  
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

## ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

### CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.